

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2019 թվականի սեպտեմբերի 9- ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 12<sup>Ա</sup> դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Ան. Թաղևոսյանը և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Ջ. Գևորգյանը:

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրություն:
2. Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական նյութերի ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը:
3. Ընթացիկ հարցեր /կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

1.Լսեցին.- Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրության հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Ան. Թաղևոսյանը՝ ներկայացնելով ծնողական խորհրդի ընտրության կարգը:

Առաջարկվեց նոր ուսումնական տարվա համար ձևավորել 12<sup>Ա</sup> դասարանի ծնողական խորհուրդ՝ նախագահ և չորս անդամ կազմով:

Առաջարկվեց հինգ անդամների թեկնածություն:

Նախագահի թեկնածու առաջադրվեց Ռուզաննա Պետրոսյանը, որից հետո կատարվեց քվեարկություն: 5 կողմ ,0 դեմ ձայնով Ռուզաննա Պետրոսյանը ընտրվեց նախագահ:

Որոշեցին.

12-րդ Ա դասարանում ձևավորել ծնողական խորհուրդ հետևյալ կազմով՝

1. Ռուզաննա Պետրոսյան /նախագահ/
2. Հայրապետյան Անահիտ / անդամ/
3. Հայրապետյան Հայարփի /անդամ/
4. Ասատրյան Ալիսա /անդամ/
5. Թաղևոսյան Նաիրա /անդամ/

2.Լսեցին.- Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական նյութերի ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը:

Դասդեկ Ան. Թաղևոսյանը նշեց, որ ծնողները մանկավարժական կոլեկտիվի հետ միասին պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել երեխաների դաստիարակության հիմնախնդիրների հարցում:

Դասդեկը հորդորեց ծնողներին աջակցել դպրոցին՝ ուսուցիչներին պարտադիր կրթություն իրականացնելու, սովորողներին ուսուցման և դաստիարակության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու համար: Ուսուցիչներին և դասդեկին օգնել ձեռք բերել կրթության գործընթացի նորմալ կազմակերպման համար անհրաժեշտ ուսումնասօժանդակ պարագաներ, ժամանակին վճարել դասագրքերի վարձավճարները: Դասդեկը ներկայացրեց, որ դասագրքերի վարձավճարների հավաքագրումն ու հանձնումը գրադարանավարուհուն՝ կատարվում է ծնողական խորհրդի նախագահի և անդամների միջոցով:

Որոշեցին.


Օգնել դասդեկին և ուսուցիչներին՝ ձեռք բերելու անհրաժեշտ ուսումնասօժանդակ պարագաներ, կազմակերպված իրականացնել դասագրքերի վարձավճարների հավաքագրումը և ժամանակին հանձնել գրադարանավարուհուն՝ համապատասխան ցուցակով:

3. Լսեցին .- Ընթացիկ հարցեր /կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

Դասդեկ Ան. Թաղևոսյանը նշեց, որ նոր ուսումնական տարում դպրոցը աշխատելու է հնգօրյա ռեժիմով: Դասերը սկսվելու են 9<sup>00</sup>, ավարտվելու են 15<sup>00</sup>-ին: Դասդեկը հորդորեց ծնողներին հետևողական լինել իրենց երեխաների նկատմամբ, հետևել, որ աշակերտները դպրոց հաճախեն պայուսակով, դասագրքերով, աշակերտավայել կեցվածքով: Ենթարկվեն դպրոցի ներքին կարգապահական կանոններին և աշակերտավայել վարք դրսևորեն՝ դպրոցում: Պահել ծնող-դասդեկ-աշակերտ կապը և անհրաժեշտության դեպքում այցելեն դպրոց՝ իրենց երեխաների վրա վերահսկողությունը մեծացնելու նպատակով:

Որոշեցին.

Առավել ուշադիր և հետևողական լինել, որ աշակերտերը դպրոց հաճախեն հավուր պատշաճի, լինեն կարգապահ և դասերին պատրաստ:

Ծնողական խորհրդի նախագահ՝  /Ռ. Պետրոսյան /

Քարտուղար՝  /Ան. Հայրապետյան /